

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Տիգրան Տոլիկի Մուկուչյան

**ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵՍԱ-ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ը

ԵՐԵՎԱՆ 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Тигран Толикович Мукучян

**СУДЕБНАЯ ВЛАСТЬ И ТЕОРИКО-ЮРИДИЧЕСКИЕ
ОСНОВЫ ЕГО РЕАЛИЗАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

А В Т О Р Е Ф Е Р А Т

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04 - Судебное право (судоустройство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности)

ЕРЕВАН 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիրանդյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյան իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Ռ. Հարությունյան
Առաջատար կազմակերպություն՝	ՀՀ Ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի մարտի 13-ին՝ ժամը 14³⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2015 թվականի փետրվարի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավ. գիտությունների դոկտոր, դոցենտ՝

Վ.Դ. Ավետիսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук,
профессор **С.А. Дилбандян**

Официальные оппоненты: доктор юридических наук,
профессор **С.С. Аветисян**
кандидат юридических наук,
доцент, **А.Р. Арутюнян**

Ведущая организация: **Образовательный комплекс Полиции РА**

Защита состоится 13-го марта 2015г. в 14³⁰ часов на заседании Специального совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 11-го февраля 2015 года.

Ученый секретарь специализированного совета,
доктор юридических наук, доцент

В.Д. Аветисян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի հետազոտության արդյունքները: Հայաստանի Հանրապետության առջև ծառայած կարևորագույն մարտահրավերներից է դատական իշխանության անկախության ապահովումը՝ արդյունքում անկախ դատարանի կայացումը:

Այս առումով, նոր փուլ մտած դատախարակական բարեփոխումների առանցքային նպատակը, մեր կարծիքով, նրանում է, որպեսզի դատական իշխանությունը և դրա ինստիտուցիոնալ կառուցվածքը ոչ միայն ձևականորեն, այլև իրականում նպաստեն լիակատար և պրոֆեսիոնալ արդարադատության իրականացմանը՝ զերծ ցանկացած կամայական միջամտություններից:

Արդար և արդյունավետ դատական իշխանության կայացման հրամայականն ամրագրված է Հանրապետության Նախագահի 2012թ. հունիսի 30-ի թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ռազմավարական ծրագրում, որի համաձայն. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու միջազգային պայմանագրերով ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովող դատական համակարգի ու օրենսդրության առկայությունը և դրանցով պայմանավորված՝ իրավական ու դատական բարեփոխումները շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության գլխավոր առաջնահերթություններից մեկը:

Արդար և արդյունավետ դատական իշխանությունն իրավունքի գերակայության, արդար դատաքննության և արդյունավետ արդարադատության կարևորագույն նախադրյալներից է, որին ձգտում է մարդու իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք հռչակած ամեն մի պետություն»:

Այս ամենը ենթադրում է օրենսդրական, ինստիտուցիոնալ, դատավարական և նյութատեխնիկական համալիր միջոցառումների իրականացում:

Դատախարակական բարեփոխումները ՀՀ-ում սկսվել են անկախացման առաջին իսկ տարիներից և հանդիպել են այնպիսի մարտահրավերների, որոնք բնորոշ են ժողովրդավարության ուղին բռնած թերևս բոլոր երկրներին:

Անցած ժամանակահատվածում բավականին մեծ աշխատանքներ են կատարվել: Ստեղծվել է եռաստիճան դատական համակարգ, անձանց համար դատարանները դարձել են առավել մատչելի, ներդրվել են նոր մեխանիզմներ դատական իշխանության անկախությունն ապահովելու նպատակով, սակայն ժամանակի պահանջներին համապատասխանող դատախարակական համակարգ ունենալու համար դեռևս կան չլուծված խնդիրներ: Մասնավորապես, դեռևս անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել անկախ և հաշվետու արդարադատության ապահովման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, արդարադատության հասանելիության, արդյունավետության և թափանցիկության ապահովման ուղղությամբ: Նշվածի գործնական հաջողությունն ու արդյունքի գնահատումը հնարավոր է բացառապես դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության մակարդակով:

Ներկայացվածի լավագույն հիմնավորում է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի 14.10.2014թ. նիստում հաստատած Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բարեփոխումների հայեցակարգը, որի 2.6 բաժինը նվիրված է դատական իշխանությանը, և փաստելով դատական իշխանության գոր-

ծունակության ցածր մակարդակը այն պայմանավորում է դատական իշխանության գործառությանը անհատակություններով, կառուցակարգային անկայունությամբ, ոչ լիարժեք անկախությամբ, դատավարական ընթացակարգերի թերություններով, ինչպես նաև սուբյեկտիվ գործոններով պայմանավորված մի շարք բացասական դրսևորումներով: Հայեցակարգով ամրագրվում է, որ դատական իշխանության գործառությանը ամբողջականությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի դատական իշխանության առաքելությունը, հիմնական գործառությոները, այն մարմնավորող կառույցների կազմակերպման և գործունեության հիմքերն ունենան սահմանադրական ամրագրում: Նշվածից ակնհայտ է ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը և արդիականությունը:

Այս կապակցությամբ, գտնում ենք, որ հայրենական իրավագիտության արդիական հիմնախնդիրներից է՝ դատական իշխանության մարմինների անկախության, համակարգվածության և բնականոն կենսագործունեության հետ կապված համալիր հիմնահարցերի գիտական հետազոտության իրականացումը:

Մեր կարծիքով, վերոնշված է պայմանավորված թեմայի հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական ուսումնասիրության աստիճանը: Արտասահմանյան և հայրենական իրավաբանական գրականության մեջ բավականին խորությամբ ուսումնասիրվել են դատական իշխանության հետ կապված բազմաթիվ հիմնախնդիրներ, կատարվել է լուրջ գիտահետազոտական աշխատանք: Հայրենական իրավագիտության մեջ հիշարժան են հատկապես անվանի գիտնականներ՝ Գ.Գ. Հարությունյանի, Գ.Ս. Ղազինյանի, Ս.Ա. Դիլբանդյանի, Ռ.Գ. Պետրոսյանի, Գ.Բ. Դանիելյանի, Մ.Գ. Խաչատրյանի աշխատությունները, որոնք տեսական և մեթոդաբանական բազա են հանդիսանում հետագա ուսումնասիրողների համար:

Այստեղ արժանի են հիշատակման նաև երիտասարդ սերնդի գիտնականների և հետազոտողների աշխատանքները՝ նվիրված դատական իշխանության պատմատեսական հիմնախնդիրներին: Ինչպես տեսնում ենք, Հայաստանի Հանրապետության դատական իշխանության կայացման հիմնախնդիրների հետ կապված մեկ ամբողջական ու համակարգված գիտական հետազոտական աշխատանք բացակայում է հայրենական իրավագիտության մեջ: Ամենևին էլ չհավակնելով վերոնշված խնդիրների վերջնական լուծմանը, այնուհանդերձ սույն ատենախոսական աշխատանքը հետապնդում է մենագրության տեսքով ներկայացնել դատական իշխանության և դրա իրականացման մարմինների զարգացման առանձնահատկություններն ու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության օբյեկտը: Ատենախոսական հետազոտության օբյեկտն են կազմում Հայաստանի Հանրապետության դատական իշխանության կազմավորման և իրականացման ընթացքում առաջացող, ինչպես նաև անկախ և արդյունավետորեն գործող արդարադատության համակարգի կայացումն ապահովող իրավահարաբերությունները:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան է՝ դատական իշխանության կազմավորման և իրականացման ընթացքում առկա հիմնախնդիրների, թերությունների տեսաիրավական վերլուծությունը ու անկախ և արդյունավետորեն

գործող արդարադատության համակարգի կայացմանը նպաստող, ի հայտ եկած թերությունների վերացումն ապահովող համարժեք լուծումների և գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակումը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետության դատական իշխանության համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումը, շրջանառության մեջ տեսական նոր ինստիտուտների, դրույթների, եզրույթների, կատեգորիաների և պատկերացումների ներդրումը, կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա օրենսդրության դրույթների կատարելագործմանը ուղղված առաջարկությունների մշակումը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար խնդիր է դրվել՝

- վերլուծել Հայաստանի երեք հանրապետություններում դատական իշխանության ձևավորման հիմնական բնութագրիչները՝ բացահայտելով զարգացման առանձնահատկությունները և դրանք կանխորոշող գործոնները.

- վերլուծել Հայաստանի Երրորդ Հանրապետության դատաիրավական բարեփոխումների էությունն ու փուլերը, դրանց անհրաժեշտության հիմնավորումները, արձանագրված ձեռքբերումները և թույլ տրված սխալներն ու թերությունները.

- հետազոտել դատական իշխանության անկախությունն ապահովող գործառույթային և կառուցակարգային հիմնախնդիրները, նյութական ու սոցիալական անհրաժեշտ երաշխիքների տեսաիրավական և գործնականում դրանց ապահովման հիմնախնդիրները.

- բացահայտել դատական իշխանության գործառույթային առանձին անհատականություններին, ոչ լիարժեք անկախությանը, ինչպես նաև այլ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված բացասական դրսևորումներին նպաստող ոչ լիարժեք ինստիտուցիոնալ բնույթի սխալ լուծումները.

- ներկայացնել դատական իշխանության անկախության և արդարադատության արդյունավետության բարձրացմանը նպաստող առաջարկություններ:

Հետազոտության տեսական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքը ձևավորել են պետության և իրավունքի տեսությանը և պատմությանը, սահմանադրական իրավունքին, քրեական, քաղաքացիական, վարչական դատավարության իրավունքներին, դատարանակազմությանը, արդարադատության առանձին սկզբունքներին և նախադեպային իրավունքին նվիրված գիտական աշխատությունները, ատենախոսությունները և հոդվածները: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են ինչպես հայրենական գիտնականների, մասնավորապես՝ Գ. Հարությունյանի, Գ. Ղազինյանի, Գ. Դանիելյանի, Ա. Վաղարշյանի, Ս. Դիլբանդյանի, Վ. Ներսեսյանցի, այնպես էլ օտարազգի գիտնականների՝ Ն. Սալիշևայի, Ս. Կորֆի, Ի. Պետրուխինի, Ս. Բոբոտովի, Վ. Սեմյոնովի, Բ. Ստրաշունի, Պ. Ստուչկայի, Ա. Վերեջագինի, Ն. Մարչենկոյի, Գ. Շերշեննիչի, Կ. Լեմայերի, Կ. Գուցենկոյի, Ի. Նովիցկու, Ն. Կորկունովի, Ս. Շեիֆերի, Ա. Վենգերովի, Վ. Բիբիլոյի, Վ. Անիշինայի և այլ գիտական աշխատությունները:

Հետազոտության իրավական հիմքը: Հետազոտության իրավական հիմքը կազմել են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ դատական օրենսգիրքը, ՀՀ քրեական, քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերը, «Իրավական ակտերի մա-

սին» ՀՀ օրենքը, ՀՀ Նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները, ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ օրենսդրական ակտերը, ինչպես նաև հետազոտության օբյեկտին և առարկային առնչվող այլ օրենքները և իրավական ակտերը: Աշխատանքի իրավական հիմք են հանդիսացել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի առանձին հանձնարարականները, Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի և Վենետիկի հանձնաժողովի առանձին կարծիքներն ու եզրակացությունները, ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական, վճռաբեկ, վերաքննիչ դատարանների դատական ակտերը:

Հետազոտության փորձառական հիմքը: Հետազոտության փորձառական հիմքն է կազմել ՀՀ դատական դեպարտամենտի վիճակագրական տեղեկատվությունը: Հետազոտության խնդիրների արդյունավետ և լիարժեք լուծման նկատառումներով պայմանավորված առավել վիճելի և գիտական հիմնավորում պահանջող դրույթների վերաբերյալ հարցումներ են անցկացվել դատավորների և դատական դեպարտամենտի աշխատակիցների մեջ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսությունում, պայմանավորված հետազոտման կոնկրետ նպատակով ու խնդիրներով, օգտագործվել են ինչպես ընդհանուր հետազոտական մեթոդները՝ դիալեկտիկայի, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, վերլուծական, սինթեզի, անալոգիայի, քննադատական մեթոդները, այնպես էլ մասնագիտական հատուկ մեթոդներ՝ համակարգակառուցվածքային, իրավահամեմատական մեթոդները, որոնց կիրառմամբ վերլուծվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, գիտահետազոտական աշխատանքները, դատական ակտերը, վեր են հանվել այս բնագավառում առկա տեսական և գործնական հիմնախնդիրները, դրանց լուծման ուղղությամբ առաջարկվող ընդհանուր լուծումները և այլն:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն առաջին հերթին կայանում է նրանում, որ փորձ է արվում համակողմանի ներկայացնել Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների էությունն ու փուլերը, դրանց անհրաժեշտության հիմնավորումները, արձանագրված ձեռքբերումները և առկա թերությունները՝ բացահայտելով դատական իշխանության գործառութային առանձին անհատակությունները, ոչ լիարժեք անկախությանը, ինչպես նաև այլ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված բացասական դրսևորումներին նպաստող ոչ լիարժեք ինստիտուցիոնալ բնույթի սխալ լուծումները և գիտականորեն հիմնավորված առաջարկությունների ներկայացման միջոցով համարժեք լուծումներ առաջարկել՝ դատական իշխանության անկախության կայացման և արդարադատության արդյունավետության բարձրացման նպատակով:

Ատենախոսության գիտական նորույթն ակնհայտորեն դրսևորվում է պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Անկախ դատական իշխանության կայացման հրամայականը հնարավոր է իրականացնել միայն ինստիտուցիոնալ բնույթի բարեփոխումների իրականացման միջոցով: Առկա օրենսդրական լուծումներն իրենցում պարունակվող թերությունները

րով ի գորու չեն լիարժեք կենսագործել դատական իշխանության լիակատար անկախությունը: Վերախմաստավորելով և կարևորելով դատական իշխանության դերն ու նշանակությունը, ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածում անհրաժեշտ է կատարել փոփոխություն՝ «արդարադատություն» եզրույթը փոխարինելով «դատական իշխանություն» եզրույթով:

2. Դատական իշխանության անկախության ապահովման կարևորագույն պայմաններից մեկը Արդարադատության խորհրդի դերի վերախմաստավորումն է և վերջինիս կողմից իրականացվող գործունեության լիակատար անկախության ապահովումը՝ զերծ ցանկացած միջամտությունից: Սահմանադրական մակարդակով հարկ է ամրագրել արդարադատության խորհրդի նպատակը՝ որպես «դատական անկախության ապահովման և կենսագործման երաշխավոր», իսկ մարմինը հռչակել որպես դատավորական հանրույթի բարձրագույն մարմին:

Նշված խնդրի իրականացման նպատակով անհրաժեշտ է՝

- ներդնել արդարադատության խորհրդի դատավոր անդամների՝ խորհրդում լիազորությունների իրականացման (գործունեության) ընթացքում դատավորական լիազորությունների կասեցման ինստիտուտը.

- ուժը կորցրած ճանաչել ՀՀ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի 3-րդ մասը, փոխարենը ամրագրելով իրավակարգավորումներ, որոնք կբացառեն վճռաբեկ դատարանի նախագահի որևէ գործառույթ կամ լիազորություն կապված արդարադատության խորհրդի հետ.

- որպես դատարան գործեր քննելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգն անհրաժեշտ է մանրակրկիտ կանոնակարգել դատական օրենսգրքով, բացառելով վարչական դատավարության օրենսգրքին հղումների կատարումը, այն էլ «իրենց էությամբ կիրառելի» եզրույթային օրենսդրական տեխնիկայով.

- օրենսդրորեն սահմանել պահանջ, որպեսզի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ արդարադատության խորհրդի որոշումներում պատճառաբանվեն վարույթին դատավորի ներկայացած հանգամանքներից յուրաքանչյուրը:

3. Անկախ դատական իշխանության կայացումը պայմանավորված է նաև դատավորի կարգապահական պատասխանատվության ինստիտուտի կատարելագործմամբ:

Արդարադատություն իրականացնելիս նյութական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը չպետք է ամրագրվի որպես դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք: Դատավորի աշխատավարձի նվազեցումը որպես կարգապահական տույժ անհրաժեշտ է վերացնել՝ աշխատավարձը դիտելով որպես նրա տնտեսական անկախության ապահովման երաշխիք: Կարգապահական վարույթ հարուցելու իրավասություններով օժտված սուբյեկտային կազմը պետք է լինի նույնը բոլոր աստիճանների դատավորների համար: Անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել նաև Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթը, ըստ որի կարգապահական վարույթ հարուցելու առիթ է վճռաբեկ դատարանի որոշումը, որով գործը կամ հարցը ըստ էության

լուծելիս կայացված դատական ակտը որակվել է ակնհայտ ապօրինի:

4. Դատախիրավական համակարգի արդի բարեփոխումների հիմնական առանցքը պետք է հանդիսանան վճռաբեկ դատարանի տեղի և դերի ճիշտ որոշումը, որպես արդարադատություն իրականացնող մարմնի՝ բարձրագույն դատական ատյանի և ոչ երբեք դատական համակարգի բարձրագույն մարմնի: Նշված խնդրի իրականացման նպատակով անհրաժեշտ է՝

- Սահմանադրությամբ վճռաբեկ դատարանի հիմնական առաքելություն հռչակված՝ «ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը» ինստիտուտը փոխարինել՝ «օրենքի միատեսակ մեկնաբանությանը նպաստելու» ինստիտուտով՝ ամբողջությամբ վերաիմաստավորելով վճռաբեկ դատարանի առաքելությունը.

- վճռաբեկ դատարանի օրենքի մեկնաբանությունների պարտադիրությունն ավելի ցածր ատյանի դատարանների համար սահմանել ատյանային հեղինակության ուժի սկզբունքով և ոչ երբեք օրենքի իմպերատիվ պահանջով և պատասխանատվության սպառնալիքով: Այսինքն՝ հիմնովին վերանայել ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի մոտեցումները, դրանցում իրականացնել արմատական բարեփոխումներ և հայրենական դատական համակարգում նախադեպի մոդելի ընտրության հարցում որպես հիմք ընդունել մայրցամաքային եվրոպական մոդելը՝ *Jurisprudence constante*՝ հիմքում ունենալով ատյանային հեղինակության ուժը.

- վճռաբեկ դատարանի կողմից կոնկրետ իրավանորմին տրված մեկնաբանությունների կայունությունը և իրավական որոշակիությունը ապահովելու առումով անհրաժեշտ է կանոնի սահմանում, ըստ որի իրավունքի ատյանի կողմից օրենքին տրված մեկնաբանությունը չի կարող փոփոխվել հինգ տարվա ընթացքում:

5. Դատախիրավական համակարգի արդի բարեփոխումների համատեքստում առանձնակի ուշադրություն պետք է դարձվի մասնագիտացված դատարանների ստեղծման հարցին, որը մեծապես կնպաստի արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացմանը: Մասնագիտացված դատարանների ստեղծումը պետք է պայմանավորված լինի առանձին կատեգորիայի գործերի քննության առանձնահատկություններով և իրականացվի դատարանակազմության ընդհանուր ինստիտուցիոնալ մոտեցումների լիակատար իրացմամբ: Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտություն է «փոքր գործերի» դատարանների և սնանկության դատարանի ստեղծումը:

6. Վարչական արդարադատության կայացման առումով առանձնակի ուշադրության են արժանի վարչական դատարանին ընդդատյա որոշ հատուկ վարույթների լինելիության խնդիրը: Հատուկ վարույթների սահմանումը պետք է պայմանավորված լինի առանձին գործերի քննության օբյեկտիվ առանձնահատկություններով: Այդ առումով գտնում ենք, որ վարչական դատավարության օրենսգրքից պետք է հանվեն դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին, ինչպես նաև 2013թ. վարչական դատավարություն ներմուծված նոր՝ լիցենզիայի իրավաչափության գործերի մասին հատուկ վարույթները:

Ատենախոսության տեսական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունը աշխատանքի արդյունքում ստացված եզրակացությունների և առաջարկությունների գիտության մեջ և պրակտիկայում ներդրվելու հնարավորությամբ:

յան մեջ է, քանի որ դրանք լրացնում են դատական իրավունքի տեսական դրույթների վերաբերյալ բացը:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Հետազոտության կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ հեղինակի եզրակացություններն ու առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ Սահմանադրության, ՀՀ դատական օրենսգրքի, քրեական, քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերի բարեփոխումների օրենսդրական նախագծեր նախապատրաստելիս: Այն կարող է օգտագործվել իրավունքի տեսության և դատական իրավունքի, որպես հատուկ դասընթացի ուսումնասիրության ժամանակ, ուսումնամեթոդական ձեռնարկներ կազմելիս, դատական ծառայողների որակավորման դասընթացներ կազմակերպելիս: Այն կարող է նպաստել նաև իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում: Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հրատարակված մի շարք գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, ընդհանուր 7 պարագրաֆ ներառող 3 գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից, իսկ ատենախոսության ձևավորումը համապատասխանում է ԲՈՀ-ի կողմից սահմանված պահանջներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսական, իրավական և փորձառնական հիմքերը, ատենախոսության մեթոդաբանական հիմքը և մեթոդիկան, գիտական նորությունը, հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մարմինների ձևավորման և զարգացման իրավական հիմքերը» վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆներից: Նշված գլխով ներկայացվում է պետականության կորստից շուրջ 600 տարի անց պետականության վերականգնման և դրա հետագա զարգացման տարիներին, իշխանության կարևորագույն ճյուղի՝ դատական իշխանության կայացման և զարգացման ուղղությունները: Նշված գլուխը չնայած կառուցված է պատմական ժամանակաշրջաններին համապատասխան, այդուհանդերձ դրանով չեն ներկայացվում սուկ պատմական փաստերը և դատական համակարգի զարգացման պատմությունը, այլ խնդիր է դրվել ներկայացնելու Հայաստանի երեք հանրապետություններում դատական իշխանության կայացման և զարգացման տեսաիրավական հիմքերը, դատարանակազմական և դատավարական հայեցակարգային և ինստիտուցիոնալ լուծումների ընտրությունը նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններն ու գաղափարախո-

սակյան հենքը, արձանագրված ձեռքբերումներն ու թույլ տրված սխալները:

Առաջին «Հայաստանի առաջին հանրապետության դատական իշխանության էական բնութագրիչները» վերտառությամբ պարագրաֆում, հեղինակն անրադարձել է 1918թ-1920թթ. Հայաստանի Հանրապետության դատական իշխանության կայացման և զարգացման հիմնախնդիրներին: Հանգամանալից ներկայացված են Առաջին հանրապետության դատական իշխանության մարմինների կազմավորման և զարգացման առանձնահատկությունները, ընտրված մոտեցումներն ու հայեցակարգային լուծումները: Իրականացված ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հեղինակը եզրահանգում է, որ նոր ձևավորված պետության առանցքային հարցերից մեկը հանդիսացել է դատական իշխանության կայացումը: Ձևավորված դատական համակարգը թե իր կառուցվածքով և թե իր գործունեության սկզբունքներով հանդիսացել է ժողովրդավարական ձեռքբերում, սակայն ատենախոսի կարծիքով՝ պայմանավորված բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով հանրապետությունում ձևավորված դատական համակարգն ի գորու չեղավ ապահովելու արդյունավետ արդարադատության իրականացումը, իսկ դատական համակարգի ստեղծումից ի վեր իրականացված օրենսդրական փոփոխությունները կրել են ոչ համակարգային բնույթ, դրանք տարերային էին և վերաբերում էին ընթացս ծագած խնդիրներին դատարանները կամ նրանց գործունեությունը հարմարեցնելուն: Իրականացված օրենսդրական փոփոխությունները հիմնականում հետադիմական էին, հաճախ, անգամ հրաժարում առանձին ժողովրդավարական ինստիտուտներից:

Երկրորդ «Խորհրդային Հայաստանի արդարադատության ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ պարագրաֆում, ատենախոսն անրադարձել է խորհրդային ժամանակաշրջանում դատական համակարգի հիմնադրմանն ու զարգացմանը, երբ նախորդ դատական համակարգն ամբողջությամբ վերացվեց տեղը զիջելով նորին: Դատական համակարգ, որը համապատասխանում էր պետական կառավարման առանձնահատուկ ձևին՝ հիմնված Խորհուրդների լիիրավ իշխանության և դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների վրա: Ատենախոսի կողմից ներկայացվում է խորհրդային դատական համակարգի զարգացումը, որը պայմանավորված էր խորհրդային պետության զարգացման պատմական ժամանակաշրջաններով ու առանձնահատկություններով: Ամփոփելով նշված ժամանակահատվածը, ատենախոսը եզրահանգել է, որ իրավունքի սուբյեկտների նկատմամբ ոչ թե խիստ իրավական, ինչպես իրավունքի մայրցամաքային կամ նախադեպային համակարգերում, այլ սոցիալ-դասակարգային մոտեցումը խորհրդային իրավական համակարգի գաղափարախոսական հենքն էր և նրա էական առանձնահատկությունը: Խորհրդային իրավունքին հայտնի չէր «դատական իշխանություն» հասկացությունը՝ բառի բուն իմաստով: Դատարանը համարվում էր իրավապահպան մարմիններից մեկը և դատախազության ու ոստիկանության հետ մեկտեղ, կոչված էր պայքարել հանցավորության դեմ: Խորհրդային պետության հետագա զարգացման տարիներին, հատկապես անցյալ դարի 70-80-ական թվականներին դատարանի նկատմամբ նման մոտեցումը ինչ-որ չափով «մեղմվեց» և այն դիտում էին որպես «արդարադատություն իրականացնող և սոցիալիստական օրինականությունը ապահովող» մարմին,

բայց ոչ երբեք իշխանության առանձին և ինքնուրույն ճյուղ:

Երրորդ՝ «Հայաստանի երրորդ հանրապետության դատական իշխանության մարմինների ձևավորման գործընթացը, իրավական հիմքերը, զարգացման փուլերը» վերտառությամբ պարագրաֆում, ներկայացված են Նորանկախ Հայաստանի դատական իշխանության կայացմանն ու զարգացման հիմնահարցերը, իրականացված դատաիրավական բարեփոխումները: 1990թ. օգոստոսի 23-ի Հայաստանի անկախության մասին Հռչակագրի դրույթները հանդիսացան Հայաստանի սահմանադրական ապագա զարգացումների սկզբունքային կողմորոշիչները՝ կանխորոշելով նոր Հայաստանի զարգացման ուղենիշները: Հռչակագրի 9-րդ կետով Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում էր «օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը», որն ըստ էության հռչակվում էր նոր, սկզբունքորեն այլ որակական չափանիշների համապատասխանող իրավակարգի հիմքը:

Նշված ժամանակահատվածը հեղինակի կողմից ներկայացվում է ըստ իրականացված դատաիրավական բարեփոխումների փուլերի՝ անկախության հռչակումից մինչև ՀՀ Սահմանադրության ընդունում, ՀՀ Սահմանադրության ընդունումից մինչև 2005թ. սահմանադրական բարեփոխումներ և սահմանադրական բարեփոխումներից հետո ընկած ժամանակահատված: Ատենախոսի կողմից ներկայացվում են յուրաքանչյուր փուլի դատաիրավական բարեփոխումները, արձանագրված ձեռքբերումները, և ատենախոսի կարծիքով, տեղ գտած թերություններն ու դրանց պատճառները:

Ամփոփելով նշված ժամանակահատվածը, ատենախոսը եզրահանգում է, որ մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը հատվածական բարեփոխումների ժամանակաշրջան էր, որի նպատակը անցման տարիներին արդարադատության իրականացումն ինչ որ կերպ ապահովելն էր: Դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլը արմատական բարեփոխումների ժամանակաշրջան էր, որի ընթացքում ձևավորվեց ընդհանուր իրավասության դատական համակարգը: Մտեղծվեց եռաստիճան դատական համակարգ, քաղաքացիների համար դատարանները դարձան առավել մատչելի, էական և որակական նոր աստիճանի բարձրացավ գործերի քննության հրապարակայնությունը:

2005թ. սահմանադրական փոփոխությունների ընդունումը ազդարարեց դատաիրավական բարեփոխումների երրորդ փուլը, որի նպատակն էր դատական համակարգի կատարելագործումն ու զարգացումը, սահմանադրական նոր մոտեցումներին համահունչ նոր կանոնակարգումների և ինստիտուտների ներդրումը, դատական իշխանության անկախության և ինքնավարության երաշխիքների ամրապրումը, նոր որակով արդարադատության իրականացումը, արդարադատության որակի և արդյունավետության բարձրացումը: Ներկայացնելով նշված փուլի ձեռքբերումներն ու սայթաքումներն ատենախոսը փաստում է, որ դատաիրավական բարեփոխումների երրորդ փուլը (գուցե վճռական) լինելիության և կատարելագործման ընթացքում է, և առկա է հստակ ու աներկբա արտահայտված քաղաքական կամք արդար և արդյունավետ դատական իշխանություն կայացնելու առումով:

Երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության կազմա-

վորման հիմնարար սկզբունքները և դրանց կենսագործման մեխանիզմները» վերտառությամբ գլուխը բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին՝ «Դատական իշխանության կազմավորման հիմնական սկզբունքները» վերտառությամբ պարագրաֆում ատենախոսը ներկայացնում է այն անկյունաքարային սկզբունքները, որոնց համապատասխան պետք է ձևավորվի դատական իշխանությունը՝ անկախություն, ինքնուրույնություն, արդարադատության մատչելիություն և այլն: Ատենախոսի կարծիքով ժամանակակից պետությունում դատարանի տեղի ու դերի կանխորոշիչը հենց դատական իշխանության անկախության սկզբունքն է և որպես առանցքային սկզբունք, հենց դրա իրացվելիության աստիճանն է, որ տալիս է դատական իշխանության ամբողջական գնահատականը: Դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախության ամբողջական բովանդակությունը լիարժեք արտացոլելու համար ատենախոսն առաջարկում է որպեսզի սահմանադրական մակարդակով ամրագրվի, որ դատարաններն իրականացնում են դատական իշխանություն:

Հեղինակի կարծիքով անկախ դատական իշխանության կայացման համատեքստում առանձնակի կարևորություն է ձեռք բերում դատավորների՝ հատկապես կարգապահական պատասխանատվության ինստիտուտի կատարելագործումը: Ներկայացնելով ՀՀ դատական օրենսգրքի ընդունմամբ գրանցված էական տեղաշարժը, ատենախոսը գտնում է, որ վերանայման կարիք ունեն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքեր՝ առաջարկելով վերացնել արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը որպես կարգապահական պատասխանատվության հիմք: Կարևորելով դատավորի կարգապահական պատասխանատվության դերն ու նշանակությունը, այդուհանդերձ գտնում է, որ դատավորի աշխատավարձի նվազեցումը որպես կարգապահական տույժի տեսակ ևս պետք է վերացվի:

Ըստ ատենախոսի, դատական իշխանության անկախության ապահովումն առաջին հերթին պետք է իրականացվի համապատասխան երաշխիքների սահմանմամբ և հենց այդ երաշխիքների պահպանմամբ ու կյանքի կոչմամբ է, որ ապահովվելու է դատական իշխանության անկախությունը: Ատենախոսությունում ներկայացված են դատական իշխանության կազմավորման սկզբունքների ու դրանց ապահովման երաշխիքների տեսական ու գիտական հիմնավորումները և հանգամանակից կերպով վերլուծված է հայրենական օրենսդրությունում առկա լուծումները, վեր են հանվել թերությունները, որոնց կապակցությամբ ներկայացվում են կոնկրետ առաջարկություններ:

Երկրորդ՝ «Արդարադատության խորհուրդը որպես դատական իշխանության սկզբունքների կենսագործող» վերտառությամբ պարագրաֆում ատենախոսը ներկայացնում է արդարադատության խորհրդի դերի և գործունեության արդյունավետության բարձրացման հիմնահարցերը՝ խորհուրդը դիտարկելով որպես դատական իշխանության անկախության ու ինքնուրույնության ապահովման հարցերում գործուն դերակատարում ունեցող մարմին:

Անկախ դատական իշխանության կայացման առումով էական նշանակություն ունեցան 2005թ. սահմանադրական բարեփոխումները, որոնք անդրադարձան նաև

արդարադատության խորհրդի հետ կապված հիմնախնդիրներին: Էականորեն բարեփոխվեցին ՀՀ Սահմանադրության 94-րդ և 95-րդ հոդվածները և այն լրացվեց նոր 94.1-րդ հոդվածով, սակայն ինչպես նկատում է ատենախոսը՝ բարեփոխված Սահմանադրությունը այդուհանդերձ չսահմանեց արդարադատության խորհրդի բուն նպատակը: Այդ առումով առաջարկում է սահմանադրական մակարդակով ամրագրել արդարադատության խորհրդի նպատակը՝ որպես դատական անկախության ապահովման և կենսագործման երաշխավոր: Ատենախոսն անհրաժեշտ է համարում նաև նոր իրավակարգավորումների նախատեսումը, որոնք կապահովեն արդարադատության խորհրդի կառուցակարգային անկախության այնպիսի մակարդակ, որով նշված մարմինը ապահովագրված կլինի ոչ իրավաչափ կամ հայեցողական ազդեցություններից: Այդ առումով, ատենախոսն առաջարկում է նոր հայեցակարգային լուծում՝ ներդնել արդարադատության խորհրդի դատավոր անդամների՝ խորհրդում լիազորությունների իրականացման (գործունեության) ընթացքում դատավորական լիազորությունների կասեցման ինստիտուտը:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրության առանձին նյութ է դարձել արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը, քանզի դատական իշխանության անկախության ապահովումը պայմանավորված է նաև այդ ինստիտուտի ճիշտ գործադրմամբ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը պատկանում է արդարադատության խորհրդին, հետևաբար, ըստ ատենախոսի, դատավորի արարքին գնահատական տալը ևս պետք է լինի բացառապես խորհրդի իրավասություն, ուստիև պետք է վերացվի ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումը, որով կարգապահական վարույթ հարուցելու առիթ է սահմանվում վճռաբեկ դատարանի որոշումը, որով հաստատվել է, որ արդարադատություն իրականացնելիս դատավորը թույլ է տվել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում:

Անդրադառնալով Արդարադատության խորհրդում որպես դատարան գործերի քննության կարգին, ատենախոսը գտնում է, որ հենց դատական օրենսգրքով պետք է կանոնակարգվի կարգապահական վարույթի ողջ ընթացակարգը:

Երրորդ՝ «Դատական իշխանության գործառնության հիմնախնդիրները» վերտառությամբ գլուխը, բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին՝ «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի առանձին գործառնություններն ու դրանց կատարելագործման հիմնահարցերը» վերտառությամբ պարագրաֆում ներկայացվում է վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը, որն անրագրվեց 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում և նրա առանձին գործառնությունները: Նշված բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածը սահմանեց Հայաստանի իրավական համակարգի համար շրջադարձային փոփոխություն, այն է. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը»: Իրականացված ուսումնասիրության արդյունքում ա-

ատենախոսը գտնում է, որ սահմանադրական կանոնակարգումներում թույլ է տրված տերմինաբանական լրջագույն սխալ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածում նշվում է, որ վճարել դատարանը կոչված է «ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը»: ՀՀ իրավական համակարգում դատական նախադեպի մուտքը նախանշող այս իրավանորմով ամրագրված «օրենքների միատեսակ կիրառությունն ապահովելու» և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 հանձնարարականի «օրենքի միատեսակ մեկնաբանությանը նպաստելու» ինստիտուտները, ըստ հեղինակի ունեն միանգամայն տարբեր բովանդակային ծանրաբեռնում: Իրականացված հետազոտության արդյունքում, ատենախոսը փաստում է, որ իրավունքի ռեցեպցիայի արդյունքում ՀՀ օրենսդրությունն մուտք գործած եզրույթի թարգմանչական անճշտության հետևանքով առաջացել է ինստիտուցիոնալ խառնաշփոթ: Ատենախոսը կարծում է, որ «օրենքների միատեսակ կիրառությունն ապահովելը» սահմանադրական իմպերատիվ պահանջ է և ոչ թե հայեցողական լիազորություն: Օրենքի միատեսակ կիրառության չի կարելի հասնել հայեցողական լիազորությամբ իրավունք զարգացնելով, ըստ այդմ, ընտրելով թե ո՞ր գործը կարող է քննվել վճարել դատարանի կողմից, որը եթե չքննվի, ապա կառաջացնի ծանր հետևանքներ: Արդյունքում ատենախոսի կողմից ներկայացվում է առաջարկություն ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածում «ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը» ինստիտուցիոնալ նշանակության եզրույթը փոխարինել «օրենքի միատեսակ մեկնաբանությանը նպաստելու» եզրույթով:

ՀՀ դատաիրավական բարեփոխումների արդյունք դատական օրենսգրքով, դատական ակտերի որոշակիությանը նպաստելու և արդարադատության կանխատեսելիությունը ապահովելու նպատակով, ամրագրեց նոր իրավակարգավորում՝ հայրենական իրավական մշակույթում ներդնելով նոր՝ դատական նախադեպի ինստիտուտը: Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի իրավակարգավորումը ենթադրում է և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական դատական նախադեպի կիրառում Հայաստանի դատական համակարգի բոլոր օղակներում, սակայն ի տարբերություն հորիզոնական նախադեպի՝ ուղղահայաց նախադեպը, ըստ ատենախոսի, պարտադիր է քանզի դատական օրենսգրքի 153-րդ հոդվածը որպես դատավորի կարգապահական պատասխանատվության հիմք սահմանում է նյութական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը: Նկատի ունենալով, որ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը ևս համարվում է նյութական իրավունքի նորմ, ատենախոսը գտնում է, որ ուղղահայաց նախադեպը մեզանում ուղղակի պարտավորեցվում է ավելի ցածր աստիճանի դատարանին սանկցիայի սպառնալիքով: Արդյունքում, հեղինակը հանգում է այն հետևության, որ օրենքի մեկնաբանումներին անդրադառնալու, դրանք զարգացնելու, օրենքի նոր մեկնաբանում տալու որևէ լիազորություն, բացի վճարել դատարանից, որևէ դատարան չունի: Մինչդեռ ատենախոսը գտնում է, որ ավելի ցածր աստիճանի դատարանը պետք է իրավունք ունենա շեղվելու վճարել դատարանի օրենքի մեկնաբանություններից և նորովի մեկնաբանի օրենքը, եթե համաձայն չէ օրենքի այն մեկնաբանությանը, որը տրվել է վճարել դատարանի կողմից: Արդյունքում ատենախոսի կողմից ներկայացվում է առաջարկություն իրականաց-

նելու արմատական բարեփոխում և նախադեպի մոդելի ընտրության հարցում որպես հիմք ընդունել մայրցամաքային եվրոպական մոդելը՝ *Jurisprudence constante*, որի պայմաններում դատական նախադեպը կլինի պարտադիր աստիճանային հեղինակության ուժով և ոչ թե սանկցիայի սպառնալիքով:

Երկրորդ՝ «Մասնագիտացված դատարանները Հայաստանի դատական համակարգում» վերտառությամբ պարագրաֆում ներկայացվում է մասնագիտացված դատարանների դերն ու նշանակությունը, դրանց ստեղծման անհրաժեշտության հիմնավորումները: Ատենախոսը գտնում է, որ մասնագիտացված դատարանների առկայությունը ապացույց է իրավական պետությունում ազգային դատական համակարգերի ժողովրդավարացման, և կարծիք հայտնում, որ դրանց ստեղծումը միանշանակ կնպաստի դատական ակտերի որակի բարձրացմանը, դատական սխալների նվազեցմանը, նպաստելով քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանությանը: Ատենախոսը առանձնակի կարևորում է վարչական արդարատության և վարչական դատարանների ստեղծումը, այն համարելով դատաիրավական բարեփոխումների երրորդ փուլի կարևորագույն ձեռքբերում: Չնայած իրականացվեց լրջագույն բարեփոխում, այդուհանդերձ, ատենախոսը փաստում է, որ առկա են նաև թերություններ ու բացթողումներ, որն առաջին հերթին պայմանավորված էր ինստիտուցիոնալ մտածողության բացակայությամբ և ներկայացնում է առաջարկություններ ուղղված վարչական արդարատության կատարելագործմանը:

Նշված պարագրաֆում ատենախոսի կողմից մանրամասն ներկայացվում և վերլուծվում է 2008թ. իրականացված բարեփոխումների արդյունքում քրեական և քաղաքացիական մասնագիտացված դատարանների ստեղծման նպատակահարմարության հարցը: Ատենախոսն ընդունելով դրանց ստեղծման ժամանակ թույլ տրված սխալներն ու թերությունները, այդուհանդերձ գտնում է, որ անհրաժեշտ էր ոչ թե վերացնել մասնագիտացված դատարանները, այլ կատարելագործել դրանց աշխատանքը և այդ առումով առաջ է քաշվում ՀՀ-ում «փոքր գործերի» դատարաններ ստեղծելու անհրաժեշտության հարցը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի համաձայն սնանկության գործերի վարույթն իրականացվում է նշված օրենքի, քաղաքացիական դատավարության և դատական օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան: Իրականացված հետազոտությամբ ատենախոսը փաստում է, որ նշված գործերի վարույթն ունի բոլորովին այլ փիլիսոփայություն և գտնում, որ սնանկության գործերի վարույթն ինքնուրույն և յուրօրինակ վարույթ է: Գիտականորեն հիմնավորված վերլուծությունների հիման վրա ատենախոսն անհրաժեշտ է համարում սնանկության գործեր քննող մասնագիտացված դատարանների ստեղծումը, և գտնում է, որ միայն նշված մոտեցմամբ է հնարավոր ապահովել սնանկության գործերի քննության արդյունավետության բարձրացումը:

Ատենախոսության հիմնական եզրակացությունները հանգում են հետևյալին.

1. Դատական իշխանության տեսական և կիրառական հիմնախնդիրների հետազոտության արդիականությունը և դրա գիտական ու գործնական նշանակությունը, ամենից առաջ, պայմանավորված է այն դերով և նշանակությամբ, որ կոչված

է կատարելու դատական իշխանությունը ոչ միայն ժողովրդավարական և իրավական պետությունում, այլև, այսպես կոչված, անցումային կամ փոխակերպվող հասարակությունում:

2. Հայաստանի անկախության հռչակումից հետո դատաիրավական բարեփոխումներն ունեցել են առանցքային նշանակություն, կատարվել է հսկայածավալ աշխատանք, լիակատար ապահովվել է անցումը խորհրդային դատական համակարգից դեպի ժողովրդավարական համակարգ: Ներդրվել են բազմաթիվ ինստիտուցիոնալ լուծումներ, սակայն ցավոք, ոչ միշտ է, որ իրականացվել են մանրակրկիտ մշակված և լայն հասարակական քննարկում անցած հայեցակարգերի հիման վրա: Իրականացված բարեփոխումների արդյունքում հավուր պատշաճի չի ուսումնասիրվել նաև մեր պատմական փորձը, չեն վերլուծվել դրա թերությունները, որոնք կարող էին մեծապես նպաստել դատաիրավական բարեփոխումների իրականացմանը: Ինչպես փաստված է Հանրապետության Նախագահի 2012թ. հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ռազմավարական ծրագրում. «Չանտեսելով կատարված բարեփոխումների արդյունքում գրանցված առաջընթացը և արդյունքները՝ դրանք չեն կարող բավարար և ամբողջական համարվել, քանի որ դեռևս լուծում չեն ստացել բազմաթիվ խնդիրներ»:

Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների ամենա առանցքային ձեռքբերումներից էր վարչական արդարադատության հիմնադրումը, որը գտնվում է զարգացման փուլում: Վարչական արդարադատության համակարգի լիակատար ներդրումը կարելի է ապահովել միայն վճռաբեկ ինքնուրույն ատյանի ձևավորմամբ (վճռաբեկ դատարանում ինքնուրույն պալատի ձևավորում):

Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների դատարանակազմության իրավահամեմատական վերլուծությամբ ակնհայտ է դառնում, որ Հայաստանում դատական իշխանության մարմինների համակարգը զարգանում է ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի երկրներին բնորոշ ուղղությամբ՝ ընդհանուր իրավասության դատարաններից անկախ մասնագիտացված դատարանների ստեղծմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը պետք է պայմանավորված լինի առանձին կատեգորիայի գործերի քննության առանձնահատկություններով և իրականացվի դատարանակազմության ընդհանուր ինստիտուցիոնալ մոտեցումների լիակատար իրացմամբ:

Պետք է շարունակվի մասնագիտացված դատարանների ինստիտուտի զարգացումը: Մասնավորապես, ստեղծելով նոր մասնագիտացված դատարաններ՝ «փոքր գործերի» դատարան, սնանկության դատարան:

3. Դատական իշխանությունը պետական միասնական իշխանության անկախ և ինքնավար ճյուղ է: Անկախ դատական իշխանության ապահովման կարևորագույն գործոններից է հանդիսանում դատավորներին պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի կատարելագործումը, այն դարձնելով անկախ որևէ ազդեցությունից: Դատավորների պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը ինստիտուցիոնալ առումով կատարելագործման անհրաժեշտություն ունեն: Այս առու-

մով էական նշանակություն է ձեռք բերում կարգապահական պատասխանատվության հիմքերի և առիթների հասակեցումը, որը ցավոք, այսօրվա իրավակարգավորումներում պարունակում է առանձին թերություններ:

4. Դատաիրավական բարեփոխումների կարևորագույն ձեռքբերումներից է հանդիսանում արդարադատության խորհրդի ստեղծումը: Մարմին, որի արդյունավետ գործունեությունը մեծապես նպաստում է անկախ դատական իշխանության կայացմանը: Նշված ինստիտուտը ստեղծումից ի վեր էապես բարելավվել է, խիստ կարևորվել և բարձրացվել է վերջինիս դերը: Այդուհանդերձ, դեռևս առկա են ինստիտուցիոնալ բացթողումներ, որոնց լուծումները մեծապես կնպաստեն ինստիտուտի կատարելագործմանը, նրա անկախությանը, աշխատանքի արդյունավետության բարձրացմանը՝ ի նպաստ դատական իշխանության անկախության ապահովմանը:

5. Վերադաս և ստորադաս դատական ատյանների դերի վերաիմաստավորում, բացառելով վերադաս դատական ատյանների կողմից ստորադաս դատական ատյանների կողմից իրականացվող արդարադատությանը ցանկացած միջամտություն կամ անուղղակի պարտադրանք, ինչն առաջին հերթին անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական նոր մոտեցումների և լուծումների ներդրմամբ՝ փակելով բոլոր հնարավոր ներագդեցության սողանքները:

6. Դատական իշխանության անկախության կանխադրույթը ենթադրում է նաև դատական ակտերի հեղինակության բարձրացում, դրանք որպես իրավունքի աղբյուրի ճանաչում, ինչպես նաև օրենքների և այլ նորմատիվ ակտերի լեգալ մեկնաբանության իրավասության և դատական հայեցողության ընդունում՝ *Jurisprudence constante* մայրցամաքային եվրոպական մոդելին համահունչ: Դատական նախադեպի ինստիտուտի կատարելագործում, նախատեսելով վճռաբեկ ատյանի դատական ակտերի իրավական դիրքորոշումների կիրառում բացառապես դատական ատյանի հեղինակության ուժի սկզբունքով: Արդյունքում սահմանադրորեն վերաիմաստավորել վճռաբեկ դատարանի դերն ու նշանակությունը կապված «օրենքների միատեսակ կիրառություն ապահովելու» նրա առաքելությունը՝ «օրենքի միատեսակ մեկնաբանությանը նպաստելու» ինստիտուտով փոխարինելուն:

7. Դատաիրավական բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով 2009 թ. ապրիլի 21-ի «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թթ. ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրությամբ առաջնային նպատակներ սահմանվեցին՝ անկախ, հանրության առջև հաշվետու, թափանցիկ և մատչելի արդարադատության ապահովումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, դատաիրավական համակարգի օրենսդրության և ռազմավարության բարելավումը: Դատաիրավական բարեփոխումների 2009-2011թթ. ռազմավարական գործողությունների ծրագրով նախատեսված որոշ միջոցառումներ չեն կենսագործվել հիմնականում ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով:

Սահմանադրական փոփոխություններից հետո ընդունվեցին բազմաթիվ օրենսդրական ակտեր, սակայն, թե՛ դատաիրավական բարեփոխումները, թե՛ Հա-

յաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ամբողջությամբ չլուծեցին առկա խնդիրներից ամենակարևորը՝ արդար և արդյունավետ դատական իշխանության ապահովումը: Այդ խնդրի որոշ դրսևորումներ դեռևս առկա են ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական մակարդակներում:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունում առկա է միանշանակ և հստակ արտահայտված քաղաքական կամք շարունակելու դատաիրավական բարեփոխումները, որի անհերքելի ապացույցն է Հանրապետության Նախագահի 2012թ. հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ռազմավարական ծրագրի դրույթն առ այն, որ. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու միջազգային պայմանագրերով ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանություն ապահովող դատական համակարգի ու օրենսդրության առկայությունը և դրանցով պայմանավորված՝ իրավական ու դատական բարեփոխումները շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության գլխավոր առաջնահերթություններից մեկը:

Արդար և արդյունավետ դատական իշխանությունն իրավունքի գերակայության, արդար դատաքննության և արդյունավետ արդարադատության կարևորագույն նախադրյալներից է, որին ձգտում է մարդու իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք հռչակված ամեն մի պետություն:»:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. Հայաստանի Երրորդ հանրապետության դատական իշխանության մարմինների ձևավորման գործընթացը, իրավական հիմքերը և զարգացման փուլերը //Պետություն և իրավունք, 2014 №1(63), էջեր 88-97:

2. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի առանձին գործառույթներն ու դրանց կատարելագործման հիմնահարցերը //Դատական իշխանություն, 2014 № 7-8/181-182, էջեր 20-29:

3. Մասնագիտացված դատարանները Հայաստանի Հանրապետության դատական համակարգում //Դատական իշխանություն, 2014 № 10-11/184-185, էջեր 8-15:

4. Արդարադատության խորհուրդը որպես դատական իշխանության սկզբունքների կենսագործող //Պետություն և իրավունք, 2014 №3-4(65-66), էջեր 55-64:

Мукучян Тигран Толикович

Судебная власть и теорико-юридические основы
ее реализации в Республике Армения.

Р Е З Ю М Е

Диссертация посвящена выявлению вопросов формирования и осуществления независимой судебной власти в РА.

В диссертации детально представляются особенности развития судебной власти Армении в период трех республик, ставя основной акцент на вопросы, связанные с созданием судебной власти третьей Республики.

Детально представляются судебно-правовые реформы Республики Армения, в результате которых была создана трехступенчатая судебная система, суды стали более доступны для людей, была основана административная юстиция, утвержден содержательный новый подход в вопросах установления обеспечения гарантии независимости судебной власти.

Для того, что бы иметь соответствующую требованиям времени судебно-правовую систему, нужно еще решить ряд проблем. В частности, необходимо принять меры для обеспечения независимого правосудия, для снижения коррупционных рисков, для доступности правосудия в направлении обеспечения эффективности и прозрачности.

Исследование вышеизложенных вопросов в диссертации сопровождается комментариями и взглядами видных ученых правоведов. Автор детально анализирует действующую практику Армении имея в основе международный опыт и практику, научно основанные теоретические подходы, представляет конкретные предложения:

1. Становление независимой судебной системы возможно только проведением институциональных реформ. Существующие и полностью недоработанные законодательные решения не в состоянии полностью осуществлять становление независимости судебной системы.

2. Одним из важнейших условий обеспечения независимости судебной власти, является переосмысление роли Совета юстиции и обеспечения полной независимости его деятельности: свободного от любого рода вмешательств.

Необходимо установить цель Совета юстиции как “гаранта обеспечения и реализации судебной независимости”, а орган провозгласить как высший орган судейского сообщества на конституционном уровне.

3. Становление независимой судебной власти обусловлено так же усовершенствованием института дисциплинарной ответственности судьи. “Явное и грубое нарушение материального закона” во время осуществления правосудия не должно устанавливаться как основание дисциплинарной ответственности судей. Необходимо исключить часть 5, статьи 155 Судебного кодекса, по которой поводом для возбуждения дисциплинарного производства в отношении судьи является решение кассационного суда, по которому устанавливается, что судебный акт является очевидно незаконным.

4. Основным направлением текущей судебной-правовой реформы должно быть точное определение роли и места Кассационного суда, как верховной судебной инстанции, вершающей правосудие, но ни как верховным органом судебной системы. Для реализации указанной цели необходимо: конституционная миссия кассационного суда: “обеспечить единообразное применение закона” заменить миссией “способствовать единообразному толкованию закона”: переосмысляя роль и функциональное значение кассационного суда.

5. В контексте текущей реформы судебной-правовой системы, особое внимание должно быть уделено созданию специализированных судов, которые бы в значительной степени способствовали повышению эффективности правосудия. В контексте вышеупомянутого необходимо создание судов для “малых дел” и дел по банкротствам.

6. В становлении административного правосудия особое внимание заслуживает вопрос о существовании некоторых видов особого производства, которые подсудны административному суду. Определение особых производств должно быть обусловлено объективными особенностями рассмотрения отдельных категорий дел.

Tigran Mukuchyan

**Judicial authority and theoretic-legal basis,
its implementation in the Republic of Armenia**

S U M M A R Y

The dissertation is devoted to the revelation of issues concerning the formation and implementation of independent judicial authority in the Republic of Armenia.

The development features of Armenian judicial authority during the period of three Republics are presented in the dissertation in detail, emphasising the establishment issues of judicial authority of the third Republic.

In detail are presented the judicial-legal reforms of the Republic of Armenia as a result of which three-tier court system was established, courts became more accessible for individuals, administrative justice was established, a substantial new approach was fixed in the issues of ensuring and defining guarantees for the independence of judicial authority. However there are still unresolved problems for having a judicial system corresponding to time requirements. Particularly, still it is necessary to take actions for providing the availability, efficiency and transparency of justice, ensuring independent and accountable justice, reducing corruption risks.

The research of the above mentioned issues in the dissertation is accompanied with the interpretations and views of prominent legal scholars. The current practice of Armenia is analysed in detail by the author, emerging issues in practice are presented and based on the international experience and practice, as well as scientifically grounded theoretical approaches, specific recommendations are presented:

1. Independent judicial authority can be achieved only through institutional reforms. The full impartiality of judicial authority cannot be reached with the shortcomings of the existing legal framework.

2. One of the most important conditions for ensuring independence of judicial authority is the re-interpretation of the role of Justice Council and the complete independence of its activities. On the constitutional level, it is necessary to establish the objective of the Justice Council, as “a guarantee of ensuring and implementing the judicial independence”, and proclaim the body as the highest body of procedural community.

3. The establishment of independent judicial authority is conditioned also by the improvement of the institute of judge's disciplinary liability. While administering justice, the obvious and blatant violation of the provision of organic law should not be considered as a basis for disciplinary liability of the judge. It is necessary to revoke the provision of part 5, Article 155 of the RA Judicial Code, according to which the decision of the Court of Cassation, if qualified obviously illegal, is a reason for administering disciplinary proceedings.

4. The main pillar of present judicial reforms is the right positioning of the role and place of the Court of Cassation, as a body administering justice in the capacity of supreme judicial court and never as a supreme body of the judicial system. In order to pursue the above-mentioned goal, the following steps are to be followed: the main constitutional mission of the Court of Cassation – “to ensure uniform application of the law”- should be replaced with the following – “to contribute to uniform interpretation of the law.” This will dramatically change the very essence of the mission the Court of Cassation has.

5. In the framework of present judicial reforms considerable attention should be paid to the creation of professional courts. This reform will conduce to high efficiency of the administration of justice. Accordingly, it is necessary to form small-claims courts and bankruptcy courts.

6. In terms of achieving administrative justice, the issue of the existence of special proceedings (those, that are under the jurisdiction of the Administrative Court), is to be underlined. The defining of special proceedings should be based on the objective peculiarities of considering certain cases.